ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-2-4-Ա

ք. Երևան 28.06.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի հունիսի 25-ի նիստում քննարկեց 2013 թվականի հունիսի 6-ին արտոնագրային հավատարմատար Էդուարդ Նահապետյանի կողմից ներկայացված՝ Ալեքսանդր Մոսոյանի (այսուհետ՝ բողոքարկող) «FRUITKA» (հայտ N20120880) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 87-րդ կետի 2-րդ «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «FRUITKA» բառային ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է համարվում 30-րդ և 33-րդ դասերի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «FRUTICA» (Society with limited responsibility "DOEHLER NATURAL FOOD AND BEVERAGE INGREDIENTS" 2/1, st. 2-ya Zvenigorodskaya RU-123100 Moscow (RU), IR 844498), «FRUTKI» (COMPAGNIE GERVAIS DANONE 17 boulevard Haussmann F-75009 PARIS (FR), IR 692230) ապրանքային նշաններին և 30-րդ դասի ապրանքների համար ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող «ՖՐՈՒԿՏԻԿ» (ռուս.) («ՄԵԳԱԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ, Երևան, Ս. Վրացյան 71 շ., բն. 34, AM, N 19041) ապրանքային նշանին: Կարգի 115-րդ կետի 1-ին ենթակետի, 116-րդ կետի 1-ին ենթակետի, 117-րդ կետի 1-ին

ենթակետի համաձայն բառային ապրանքային նշանների նմանությունը որոշվում է ձայնային, գրաֆիկական կամ իմաստային նմանությամբ: Տվյալ դեպքում համեմատվող բառային ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվում է համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ: Վերոհիշյալը հիմք է հանդիսանում հայտարկվող նշանի գրանցումը մերժելու համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու, քանի որ մերժված և հակադրված ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Բողոքարկողը, ինչպես բողոքում այնպես էլ նիստի ժամանակ նշեց իր անհամաձայնութունը որոշման վերաբերյալ ներկայացնելով մերժված և հակադրված ապրանքային նշանների հնչյունաբանական և տեսողական տարբերությունները:

Բողոքարկման խորհուրդը քննարկման արդյունքում եկավ այն եզրակացության, որ մերժված և հակադրված նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Էդուարդ Նահապետյանի կողմից ներկայացված՝ Ալեքսանդր Մոսոյանի «FRUITKA» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան